# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Դամկար ՍՊԸ-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի |
|---|---|
| | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պատրաստված կլինի 18 մմ հաստությամբ լամինացված ԹՏՍ E0դասից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC)։ Հետնապատը կլինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և նույն լամինացված ԹՏՍ E0դասի գույնի։ Աշխատանքային հարթության եզրերը լավ հղկված ու մշակված կլինեն, առանց ծլեպների, առջևի կլորացված հատուկ դետալներ։ Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1708 x 300 x 1644 մմ (L x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 320 x 300 x 1300 մմ (L x Խ x Բ) մմ։ Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ նախատեսված կլինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 320 x 300 x 200 մմ (L x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ)։ Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից ամրացված կլինի մետաղական բարձրորակ երկտեղանի կախիչ։ Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով։ Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով։ Այն կունենա չորս առանձին մետաղական 300 մմ բարձրությամբ ոտքեր, որոնք տեղադրվում են եզրերից 50 մմ դեպի ներս։ Ոտքերի հատակին հպվող հատվածի եզրերի տակից կամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ 8 մմ է։ Կլինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը կպարտավորվի սեղմ ժամկետներում կկատարվի համապատասխան ամրացում։ |

| | |
|---|---|
| | Կլինեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից: Կապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը կկատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծշեպների: Կապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, կլինի հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Գույնը նախապես կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի համարժեք փաստաթուղթ : Կսահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի ռուսերեն, ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Дамкар ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |